ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Խարազյան Ռ.Փ.

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ներառական կրթություն, կրթության առանձնահատուկ պայմաններ, թույլ տեսնող երեխաներ, տեսողության սրություն, գրաճանաչություն, նախայբբենական շրջան:

Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր, այդ թվում՝ զարգացման տարբեր խնդիրներ ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքի վրա՝ նրանց հասարակությանը լիարժեք կերպով ներառելու, ապահովելու ուսուցման ու դաստիարակության, անձի ձևավորման, զարգացման համար անհրաժեշտ պայմաններով: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է մասնակցությունն ինչպես ուսումնական, այնպես էլ հասարակության մշակութային կյանքին:

Ներառական կրթության հիմքում մանկակենտրոն մանկավարժությունն է, որի էությունը յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքների ճանաչումն ու գնահատումն է և կրթության գործընթացին նրա ակտիվ մասնակցության ապահովումը: Հետևաբար՝ «Ներկա դարա շրջանում երեխայի միջավայրը հումանացնելու համար դպրոցը պետք է ստեղծի բոլորի համար հավասար հնարավորություններ: Գործողությունների նշանաբանը պետք է լինի յուրաքանչյուր երեխային առողջություն, կրթություն, հավասար հնարավորություններ և պաշտպանություն: Միայն դրանով է հնարավոր հասնել հումանիստական աշխարհի՝ «երեխաների համար հարմար աշխարհի», «երեխաների կյանքի համար պիտանի աշխարհի» ստեղծմանը»,- իրավացիորեն նշում է պրոֆ. Ա.Թոփուզյանը [4, էջ 248]:

Ներառական կրթության նպատակը ոչ միայն սովորողների համար ուսման հավասար հնարավորություններիապահովումն է, այլև ուսման մեջ դժվարություններ ունեցող երեխաներին հանրակրթության մեջ ներառելը, իրենց տարեկիցների հետ հավասար պայմաններում սովորելը, բոլորի համար որակյալ և մատչելի հիմնական կրթություն ապահովելը: Այդ համատեքստում հանրապետության մի շարք դպրոցներում իրականացվում է ներառական կրթության գործընթաց՝ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող շատ աշակերտների համար ստեղծելով

սովորելու, շփվելու, իրենց տարեկից երեխաների հետ հաղորդակցվելու պայմաններ:

Ներառական կրթություն իրականացնող մի շարք դպրոցներում սովորող հատուկ կարիքներով և սովորական աշակերտների ուսուցիչների ու ծնողների հետ իրականացրել ենք հետազոտություն՝ հարցաթերթիկի և հարցազրույցի մեթոդներով:

Հետազոտության նպատակն էր՝

- Բացահայտել ծնողների և ուսուցիչների վերաբերմունքը ներառական կրթության վերաբերյալ.
- Պարզել ներառական կրթության իրականացման առավելությունները և դժվարությունները:
- Ուսումնասիրել մանկավարժական և աշակերտական կոլեկտիվների փոխհարաբերությունները ներառական կրթության պայմաններում:

Հարցաթերթիկների հարցերին ծնողների և ուսուցիչների տված պատասխանների վերլուծությունը ցույց տվեց, որ ներառական կրթության անհրաժեշտությունն զգում և կարևոր են համարում հատուկ կարիքներով երեխաների ծնողների 70%-ը, նորմալ տեսողությամբ սովորական աշակերտների ծնողների 10%-ը և ներառական դասարաններում պարապող ուսուցիչների 20 %-ը:

Այսինքն՝ և՛ հատուկ կարիքներով երեխաների ծնողների, և՛ ուսուցիչների վերաբերմունքը ներառական կրթության նկատմամբ դրական է. նրանք գիտակցում են, որ ներառական դպրոցները հիմնականում օժանդակում են կրթության հատուկ կարիք ունեցող երեխաների և սովորական աշակերտների՝ իրենց տարեկիցների հետ սովորելու անհրաժեշտությանը, սակայն սովորական երեխաների ծնողների 90 %-ը դեմ է իրենց երեխայի կողքին հաշմանդամություն ունեցող երեխա տեսնելուն:

Հատուկ կարիքներով երեխաների (մասնավորապես տեսողության խանգարումներունեցող) ծնողների 30%-ը, ընդունելով հանդերձ ներառական կրթության առավելությունները, ընդգծել է նաև դեռևս չլուծված որոշ խնդիրներ. չկան տիֆլոմանկավարժներ, չեն ապահովվում ակնաբույժի հսկողություն, արդյունավետ ռեժիմ, հիգիենայի կանոնների պահպանում, դպրոցում երեխաների համար հարմարավետ, ճիշտ լուսավորվածությամբ աշխատանքային տեղեր,թույլ տեսնողների համար չեն օգտագործվում դիդակ-



տիկ պարագաներ,օպտիկական ու տիֆլոտեխնիկական համապատասխան սարքավորումներ ու խոշորացնող սարքեր,որոնք մեծապես կարող են ընդարձակել երեխայի ճանաչողական զարգացման հնարավորությունները:

Դժվարություններ են նշել նաև ներառական դասարաններում պարապող ուսուցիչները: Այդուհանդերձ, ուսուցիչների մեծ մասը կողմ է ներառական կրթության ծրագրին, իսկ մի մասը դեմ է. նրանք նշում են, որ հաճախ չեն հասցնում դասի ընթացքում իրականացնել հատուկ կարիք ունեցող աշակերտների՝ դասի առջև դրված պահանջները. չունեն զննական պարագաներ, դիդակտիկ նյութեր, մեթոդական գրքեր, որոնք կնպաստեն ուսումնական նյութն ավելի մատչելի դարձնելուն, դասագործընթացում միաժամանակ սովորական և հատուկ կարիքներով երեխաների հետ արդյունավետ աշխատելուն:

Մանկավարժական և աշակերտական կոլեկտիվների փոխհարաբերությունները բացահայտելուն միտված հարցերին տված պատասխանների միջոցով պարզեցինք, որ մանկավարժները և աշակերտական կոլեկտիվներն ընդգծված հոգատարություն են ցուցաբերում հատուկ կարիք ունեցող երեխաներին, աշակերտները ջերմ փոխհարաբերությունների մեջ են միմյանց նկատմամբ:

Ամփոփելով մեր ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք փաստել, որ ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցներում առկա են մի շարք խնդիրներ, որոնց լուծումը հնարավորություն կտա առավել արդյունավետ կազմակերպել ընդհանրապես ուսումնական, առավելապես՝ առաջին դասարանում՝ գրաճանաչության կազմակերպման գործընթացը:

Հայտնի է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին սովորաբար ներառական կրթության մեջ են ներգրավում ՀՀ Գնահատման կենտրոնում նրանց առողջական վիճակը, առաջնային ու երկրորդային խանգարումներն ստուգելուց հետո: Երեխայի երկրորդային խնդիրներից են՝ մտավոր հետամնացությունը, խոսքի, տեսողության ու լսողության խանգարումները, հենաշարժողական համակարգի, վարքի և հուզակամային ոլորտի խնդիրները և այլն:

Կույր և թույլ տեսնող երեխաների զգալի մասը սովորում է հատուկ ուսումնական հաստատություններում, որտեղ նրանք ստանում են մտավոր և ֆիզիկական բազմակողմանի կրթություն: Սակայն ներկայումս տեսողության խանգարումներ ունեցող շատ երեխաներ (հիմնականում թույլ տեսնողներ) սովորում են ներառական դպրոցներում՝ նորմալ տեսողություն ունեցող իրենց տարեկիցների հետ:

Հաճախ հանրակրթական դպրոց են հաճախում տեսողության ցածր սրությամբ երեխաներ՝ իրենք էլ չիմանալով այդ մասին, կամ էլ ծնողներն են դպրոցից թաքցնում երեխայի առողջական խնդիրները: Մանկավարժն էլ, չիմանալով այդ մասին, նրանց նույն պահանջներն է առաջադրում, ինչ ուրիշ երեխաներին: Արդյունքում՝ երեխայի գործու-

նեության ընթացքում հակասություն է ծագում նրա պահանջմունքի և հնարավորության միջև: Առաջանում է կրթության արդյունքների ցածր մակարդակ և առողջության վատթարացում, մինչդեռ հենց առաջին դասարանցիների ծնողներն ու մանկավարժները պետք է շահագրգռված լինեն՝ բացահայտելու երեխաների ֆիզիկական ու հոգեբանական առանձնահատկությունները: Այս հանգամանքը հետագայում թույլ կտա միացյալ ուժերով օժանդակելու երեխայի կյանքի հարմարվողականությանը, նրա կարողությունների ու հմտությունների ձեռքբերման բարդ խնդրի ինքնուրույն հաղթահարմանը: Ուսուցիչը պիտի բացահայտի նման երեխաներին և առաջին հերթին իմանա նրանց խնդիրները:

Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների զարգացման գործընթացի առանձնահատկությունները դրսևորվում են ընկալման, պատկերացումների, մտածողության, խոսքային գործունեության բնագավառներում, շարժումների, տարածության մեջ կողմնորոշվելում: Դա ենթադրում է ուսուցման հատուկ ձևերի ու միջոցների կիրառում՝ միտված ընկալմանը, պատկերացումների հստակեցմանը, պատկերավոր մտածողության զարգացմանը, շարժումների կարգավորմանը և ինքնակառավարման ձևերի ու միջոցների ձևավորմանը [2, 8]:

Հայտնի է, որ նշված երեխաները, բացի տեսատարածական պատկերացումների սահմանափակ պաշարից, ունեն նաև դրանց աղավաղում, որը դժվար և դանդաղ ընկալման հետևանք է: Թույլ տեսողությունը, բնականաբար, իր հետքն է թողնում նաև երեխաների ֆիզիկական ու հոգեկան զարգացման վրա.սահմանափակվում են շարժումները, խաթարվում են ճանաչողական գործընթացները, հապաղում է ուշադրության զարգացումը և այլն: Ըստ Լ.Ի.Սոլնցևայի հետազոտության տվյալների՝ տեսողության խանգարումներ ունեցող դպրոցականների հոգեկան գործընթացները բավական բազմազան ու բարդ են: Լուրջ դժվարություններով է ընթանում տեսողական ընկալման զարգացման գործընթացը, որն էլ իր հերթին բացասաբար է անդրադառնում նրանց առաջադիմության, ուսումնական ծրագրերի յուրացման մակարդակի վրա: Թույլ տեսնող կրտսեր դպրոցականները (հատկապես տեսողական ցածր սրությամբ) հաճախ չեն կարողանում օգտագործել իրենց անլիարժեք տեսողությունը, ինչի հետևանքով չեն ստանում տեսողական պատկերացումների անհրաժեշտ քանակը և հիմնականում դժվարությամբ են յուրացնում կարդալու, գրելու, պատկերների տեսողական ընկալման միջոցները: Նրանց ընկալումը կրում է ընդհանրացված, ոչ տարբերակված բնույթ, ուստի դժվարանում են առարկաների ձևերում ու գույներում միանգամից կողմնորոշվել, տարբերակել առարկաների ու պատկերների ներքին կառուցվածքային բաղադրիչները [8]:

Այս ամենից հետևում է, որ ուսուցչից մեծ ջանքեր են պահանջվում ներառական դպրոցում սովորող տեսողության խանգարումներ ունեցող երեխաների հետ աշխատելիս: Նա պետք է օգտագործի ժամա-

նակակից տեխնիկական միջոցներ ու դիդակտիկ նյութեր, տիրապետի համագործակցային հմտություններ-ի և մանկավարժական ներգործությունների տարբեր ձևերի, կարողանա դասարանում ապահովել պատշաճ հոգեբանական մթնոլորտ՝ մանկավարժական գործընթացների և հանդուրժողականության համար:

Կրթության գործընթացի կազմակերպման կարևորագույն խնդիրներից է թույլ տեսնող երեխաների զարգացման և ակտիվության մակարդակի գնահատումը՝ կարողությունների, գիտելիքների, հատուկ կարիքների բացահայտման նպատակով, և անհատական ուսումնական պլանի (ԱՈՒՊ) մշակումը, որն ուսուցչին թույլ կտա բացահայտելու երեխայի անձի ուժեղ և թույլ կողմերը, այն դժվարությունները, որոնք ակնկալվում են մոտ ապագայում: Ինչպես Լ.Ս.Վիգոտսկին էր առաջարկում, պետք է գտնել այն առողջը, պահպանվածը, որն ունի զարգացման այս կամ այն խնդիրն ունեցող երեխան, և ուսուցման ընթացքում հենվել երեխայի պահպանված հնարավորությունների վրա՝ իրականացնելու շտկող-մանկավարժական աշխատանքներ [6]:

Ինչ աշխատանքներ պետք է իրականացնի տարրական դպրոցի ուսուցիչը նոր դպրոց եկող տեսողության խանգարումներ ունեցող երեխաներով համալրված ներառական դասարաններում: Այս հարցի պատասխանը որոշելիս առաջին հերթին պիտի նկատի ունենալ, որ տեսողության խանգարումներ ունեցող երեխաներն իրենց տարեկիցների միջավայրում մեկուսացած են զգում, ունենում են բարդույթներ, չեն ցանկանում շփվել շրջապատի հետ, ուստի ուսուցիչը դպրոց մտնելու առաջին իսկ օրից պետք է համարժեք գործողություններ ձեռնարկի՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի հոգեբանական առանձնահատկություններն ու կարիքները, վարքային դրսևորումները:

Առաջին հերթին նա պետք է հաշվի առնի նոր դպրոց եկող յուրաքանչյուր աշակերտի տեսողության սրության աստիճանը և խստորեն հետևի տեսողության հիգիենայի պահպանմանը.աշակերտին չծանրաբեռնի տեսողական գործունեություն պահանջող աշխատանքներով, հնարավորինսկրճատի դրանք, հաճախակի փոխի նրանց գործունեության ձևերը, ֆիզկուլտ դադարների ժամանակ կատարի ինչպես ընդհանուր, այնպես էլ աչքերի հոգնածությունը կանխող և հանգստացնող վարժություններ, գործածի անհատական քարտեր, այլ տեսողական պարագաներ և այլն [1]:

Գրաճանաչության նախայբբենական շրջանը շատ կարևոր է հատկապես ներառական դասարանների համար, որտեղ բացի հանրակրթական խնդիրներից(բուն գրաճանաչությանը նախապատրաստվելու) լուծվում են նաև շտկման, փոխհատուցման, զարգացման շեղումների հաղթահարման խնդիրներ:

Շատ կարևոր է նաև երեխաներին դասարանական մեկ միասնական կոլեկտիվի մեջ ընդգրկելը, հարմարեցումը (ադապտացիա), կարդալ, գրել սովորեցնելու համար նրանց տեսականորեն ու գործնականորեն, հոգեբանորեն ու ֆիզիկապես նա-

խապատրաստելը[3]:

Գրաճանաչության շրջանում են սկսվում պատկերացումների ձևավորմանը միտված աշխատանքները, որոնք հիմնականում խարսխվում են սովորողների զգայական փորձի հարստացման, բառի և այն ներկայացնող որոշակի պատկերի համապատասխանեցման, ձեռքը գրելուն նախապատրաստելու աշխատանքների վրա:

Հանրակրթական դպրոցներում նախայբբենական շրջանը տևում է մոտ երկու ամիս: Ներառական դասարաններում, ուր կարող են սովորել տարբեր տարիքային խմբերի և տարբեր կարիքներ ունեցող երեխաներ, այդ շրջանի տևողությունը կարող է տարբեր լինել՝ հիմնականում պայմանավորված երեխայի տարիքային, անհատական, հոգեբանական առանձնահատկություններով և թույլ տեսնողների տեսողության խանգարման աստիճանով:

Ուսուցման գործընթացի առաջին օրերից սկսած՝ տեսողության խանգարումներ ունեցող երեխաների մեջ առաջանում են դժվարություններ՝ պայմանավորված տարածության մեջ կողմնորոշման, ձեռքերի մանրաշարժունության անբավարար զարգացման, հաղորդակցվելու, գրավորի հետ կապված բարդություններով և այլ տարաբնույթ խաթարումներով: Հետևաբար, գրաճանաչության նախայբբենական շրջանում իրականացվող աշխատանքները, ի շարս այլ խնդիրների, պետք է միտված լինեն նաև վերը նշված խանգարումների շտկմանն ու զարգացմանը: Դրանք իրականացնում են բժիշկները, տիֆլոհոգեբաններն ու տիֆլոմանկավարժները՝ հաշվի առնելով երեխաների անհատական առանձնահատկություններն ու խանգարումների տեսակները:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տեսողական խանգարումներ ունեցող երեխաների խնդիրները շտկելու անհրաժեշտություն է առաջանում դեռևս գրաճանաչության նախայբբենական շրջանում. որքան շուտ սկսվեն շտկողադաստիարակչական աշխատանքները, այնքան արդյունավետ կընթանա խնդրի հաղթահարման գործընթացը: Խախտված զգայարանի գործառույթը այլ՝ պահպանված զգայարանի միջոցով փոխհատուցելու նպատակով կրտսեր դպրոցական տարիքում շեշտը պիտի դրվի փոխհատուցման գործընթացների վրա:

Այս ուղղությամբ էական են շտկողական աշխատանքների հետևյալ ուղղությունները.

- երեխայի խոսքի շտկումն ու զարգացումը, որը կարևոր նշանակություն ունի աշակերտներին գրաճանաչության գործընթացին նախապատրաստելու հարցում,
- տեսողական ընկալման և տարածական պատկերացումների զարգացումը,
- դաստակի մանր մկանային համակարգի զարգացումը, որը պայմանավորված է ոչ միայն ձեռքը գրելուն նախապատրաստելու անհրաժեշտությամբ, այլև խոսքի զարգացմամբ,
- լսողական և հնչութային ընկալումների զարգացումը, որը կարևոր փոխհատուցող դեր ունի տեսողության խանգարման դեպքում,

- վերլուծահամադրական մտածողության զարգացումը,
- տարածության մեջ կողմնորոշվելու կարողության ձևավորումն ու զարգացումը և այլն:

Նշված շտկողական աշխատանքների իրականացման համար ուսուցիչը պետք է.

- ծանոթանա աշակերտների հետ, բացահայտի նրանց հոգեբանական, անհատական, տարիքային առանձնահատկությունները,
- իմանա՝ երեխայի դաստիարակությունն ընտանիքո՞ւմ է ընթացել, թե՞ ուսումնական հաստատություններում,
- տեղեկանա նրանց առողջական վիճակի, տեսողության խանգարման բնույթի մասին.
- աշակերտներին ծանոթացնի միմյանց հետ, դպրոցական միջավայրին ու կարգուկանոնին, իրենց իրավունքներին ու պարտականություններին, ստեղծի դասարանական կոլեկտիվ,
- սովորեցնի դպրոցական կարգուկանոնը. դասարանում ճիշտ նստել, կանգնել, ձեռք բարձրացնել, մեծերին դիմել, օգտվել գրքից և գրենական պիտույքներից՝ դրանք խնամքով գործածելով և այլն,
- աշակերտներին սովորեցնի ազատ կողմնորոշվել շրջապատում, դպրոցի տարածքում, դասարանում, գտնել իր նստարանը, գրատախտակը, դուռը,
- ձևավորի ուսուցչի խոսքը, նրա հանձնարարությունները լսելու և կատարելու, ընկերներին արձագանքելու, նրանց հետ շփվելուև այլ կարողություններ,
- մշակի աշակերտների տեսողության, լսողության, ուշադրության և շարժողական զգացողությունները:

Վերոնշյալ կազմակերպական խնդիրներից զատ նախայբբենական շրջանում կարևոր է լուծել նաև ուսումնական խնդիրներ՝ պարզելու, թե որքանո՛վ են տեսողության խանգարումներ ունեցող երեխաները պատրաստ իրենց համար նոր՝ ուսումնական գործունեությանը:

Այս առումով ուսուցիչն առաջին հերթին պիտի ծանոթանա՝

- երեխայի առողջական վիճակի մասին բժշկի տված տվյալներին,
- երեխայի առաջնային և երկրորդային խնդիրներին, նրա տեսողության սրության աստիճանին,
- ստուգի նրա հնչյունային լսողությունն ու վերլուծական-համադրական կարողությունները, բանավոր խոսքի մակարդակը, բառապաշարի բաղադրիչները,
- բացահայտի գեղարվեստական ունակությունները (արտասանել, երգել, նվագել, պարել),
- պարզի, թե որքանով է երեխան հասկանում իրեն ուղղված խոսքը, ունի՞ վախ, տագնապ, կաշկանդվածություն, արձագանքի սահմանափակումներ և այլն,
- ունի՞ ինքնուրույն կապակցված խոսք. խանգարված չէ՞ հնչարտաբերումը:

Վերոնշյալ տեղեկություններն ուսուցչին անհրաժեշտ են երեխաների մտավոր կարողությունները և իմացական հնարավորությունները ճանաչելու, ուսումնական գործընթացում դրանք հաշվի առնելու և ըստ այդմ իր աշխատանքը կազմակերպելու համար:

Այդ աշխատանքներից են.

- մաքրել թույլ տեսնող երեխաների բառապաշարը առօրյա, բարբառային կամ օտար բառերից ու արտահայտություններից՝ սովորեցնելով դրանց գրական համարժեքները.
- ամրապնդել և զարգացնել խոսքի արտասանական կողմը, շրջապատի խոսքը հասկանալու, ազատ հաղորդակցվելու, ինքնուրույն խոսք կառուցելու կարողությունները.
- երեխաներին հաղորդել լեզվական նախագիտելիքներ՝ պատմություն, նախադասություն, բառ, վանկ, հնչյուն(ձայնավոր, բաղաձայն) հաջորդականությամբ.
- ձևավորել բառը հնչյունային վերլուծության ենթարկելու կարողություն,
- սովորեցնել տարբերակել բառի բոլոր հնչյունները, որոշել դրանց տեղը բառի մեջ, գունավորել, արտահայտել գծապատկերով.
- սովորեցնել բառերը բաժանել վանկերի (մասերի), գիտակցել տալ վանկի մեջ ձայնավորի դերը, ծանոթացնել «միավանկ և բազմավանկ բառ» հասկացություններին.
- զարգացնել երեխաների մատների շոշափողականությունը՝ մկանահոդային վարժությունների, մատների մերսման, մարզման և մատնային խաղերի, պատկերների գունավորման, եզրագծման ու նրբագծման, տառամասնիկների գրություն, պարզ պատկերներ նկարելու ու ներկելու և այլ միջոցներով.
- կատարել ձեռքի դաստակի և մատների մկանները մարզելուն միտված վարժություններ.մանր առարկաներով գործողություններ կատարելու առաջադրանքներ՝ խճանկար, հուլունքների հավաքում թելի վրա, կառուցողական աշխատանք, հյուսք թելերով, հագուստի կոճկում, աշխատանք բնական նյութերով, պլաստիլինով և կավով ծեփումներ, աշխատանք թղթով ու մկրատով և այլն:

Այս աշխատանքները երեխայից պահանջում են նուրբ շարժումների հաջորդականություն, մկանների լարում, ինչպես նաև՝ երկար ժամանակ միևնույն դիրքում անշարժ մնալու կարողություն: Այս կարողությունների բացակայության կամ անբավարար զարգացման դեպքում երեխայի ոսկրամկանային համակարգում կարող են տեղի ունենալ լուրջ խաթարումներ. ողնաշարը կարող է ծռվել, կրծքավանդակը՝ սեղմվել, շնչառությունը՝ դանդաղել, արյան շրջանառությունը՝ դժվարանալ և այլն: Նման երևույթները կանխելու համար հարկավոր է ուսումնական աշխատանքները կազմակերպել խաղային գործունեության միջոցով՝գրաճանաչության ողջ ընթացքում կիրառելով խաղ-ուսուցում սկզբունքը:

Նշենք, որ շտկողական աշխատանքների համար ավելի բարենպաստ է գրաճանաչության նախայբբենական շրջանը, թեև այդ աշխատանքների մեծ մասը կարող է շարունակվել ոչ միայն ողջ գրուսուցման ընթացքում, այլև հետագա ուսուցման գործընթացում:

Աշխատանքների կազմակերպման դժվարությունը հիմնականում

պայմանավորված է դասարանում սովորական և հատուկ կարիքներով երեխաների հետ տարվող միաժամանակյա աշխատանքով: Կարծում ենք՝ կարելի է հասնել ցանկալի արդյունքի, եթե ուսումնական աշխատանքները լավ նախապատրաստվեն տիֆլոմանկավարժի, հոգեբանի, լոգոպեդի, ծնողի համատեղ ջանքերով, և դրանց խնդիրներն արտահայտվեն նաև երեխայի անհատական ուսումնական պլանի մեջ:

Պետք է նկատի ունենալ, որ թույլ տեսնող երեխաների գրաճանաչության գործընթացն իրականացվում է նույն սկզբունքով ու մեթոդներով, ինչ նորմալ տեսնողների դեպքում. տարբեր են միայն մոտեցումները: Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների համար պետք է կիրառվեն համեմատաբար մեծ տառաչափ ունեցող դասագրքեր՝ հստակ գծագրված վառ նկարներով ու պատկերներով, որոնք հասանելի լինեն թույլ տեսնողների տեսողական ընկալմանը, սենյակը պետք է լինի պայծառ լուսավորված, օգտագործվեն դիդակտիկ նյութեր և այլն:

Այսպիսով, ներառական կրթության պայմաններում տեսողության խանգարումներ ունեցող երեխաների գրաճանաչության գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար պետք է սկսել նախնական փուլից՝ գրաճանաչության նախայբբենական շրջանից, քանի որ այն հող է նախապատրաստում բուն գրուսուցման համար, և վերջինիս արդյունավետությունը պայմանավորված է նախայբբենական շրջանում կազմակերպվող աշխատանքների մեթոդական համալիրի կատարյալությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազարյան Ռ.Ն., Երեխայի տեսողությունը, Ե., 2008:

2. Ազարյան Ռ.Ն.,Մարության Մ.Կ., Թույլ տեսնող երեխաների տեսողական ընկալման զարգացումը, Ե.,2013:

3. Գյուլամիրյան Ջ.Հ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Ե., 2009:

4. Թոփուզյան Ա.Օ, Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ,Ե., 2009:

5. Սվաջյան Ա.Հ.,Ազարյան Ռ.Ն.,Ընտանիքի դերը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների դպրոցական ուսուցման նախապատրաստման հարցում, Հատուկ կրթության գիտամեթոդական տեղեկատու, Ե., 2009, էջ 69-76:

6. Выготский Л. С. Педагогическая психология (Под ред. В. В. Давыдова. - М.: Педагогика. - Пресс, 1996. - 536 с).

7. Земцова М.И. Учителю о детях с нарушением зрения, М., 1973,– 173 с.

8. Солнцева Л.И.Развитие познавательнойдеятельности у слепых детей дошкольного возраста, М., 1967.

РЕЗЮМЕ

ПРОБЛЕМЫ ДОБУКВАРНОГО ПЕРИОДА ДЕТЕЙ С НАРУШЕНИЕМ ЗРЕНИЯ В УСЛОВИЯХ ИНКЛЮЗИВНОГО ОБРАЗОВАНИЯ

Харазян Р. П.

Доцент кафедры армянского языка и методики его преподавания Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук.

Основываясь на опыте работы и научных исследованиях, данная статья представляет значимость и важность проблемы, а также предлагает методические рекомендации по подготовке обучению грамотности детей с нарушением зрения. Особое внимание в статье было уделено корректирующим работам в добукварный период обучения грамоте.

SUMMARY

PROBLEMS OF THE LITERACY DURING PRE-ABC TRAINING PERIOD OF CHILDREN WITH VISUAL IMPAIRMENTS IN THE CONDITIONS OF INCLUSIVE EDUCATION

Kharazyan R.P.

Associate Professor the Chair of the Native language and and Teaching methods Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Candidate of Pedagogical Sciences

Based on work experience and research, the article presents the significance of the problem, as well as methodological recommendations for literacy teaching preparation of children with visual impairments. The corrective works of literacy teaching during pre-ABC period have been specialy emphasized in the article.